

5.23. 2014 թվականի մարտ ամսվա շրջակա բնական միջավայրի աղտոտվածության մշտադիտարկում

Ըստ ՀՀ բնապահպանության նախարարության տեղեկատվության, ՀՀ շրջակա բնական միջավայրը 2014թ. մարտին ունեցել է հետևյալ բնութագիրը.

5.23.1. Օդային ավազանի որակի մշտադիտարկում: Երևան քաղաքի 7 դիտակայաններում շուրջօրյա ակտիվ նմուշառման եղանակով մթնոլորտային օդի փորձանմուշներում որոշվել են փոշու, ծծմբի երկօքսիդի, ազոտի երկօքսիդի և գետնամերձ օզոնի պարունակությունները: Ակտիվ նմուշառման միջոցով ընդհանուր առմամբ վերցվել է օդի 864 փորձանմուշ: Որոշված նյութերից փոշու միջին ամսական կոնցենտրացիան ՍԹԿ-ն գերազանցել է 1.4 անգամ: Քաղաքի մթնոլորտային օդի փորձանմուշներում ավտոմատ կայանների միջոցով որոշվել են ածխածնի մոնօքսիդի, ազոտի օքսիդների (ազոտի մոնօքսիդ, ազոտի երկօքսիդ և ընդհանուր օքսիդներ) և ծծմբի երկօքսիդի պարունակությունները: Ավտոմատ սարքի միջոցով ածխածնի մոնօքսիդի պարունակության որոշման համար կատարվել է օդի 8 796, ազոտի օքսիդների համար՝ 2 232, ծծմբի երկօքսիդի համար՝ 17 658 դիտարկում: Ըստ ավտոմատ սարքերի տվյալների, մթնոլորտային օդի փորձանմուշներում որոշված նյութերի միջին ամսական կոնցենտրացիաները դիտվել են թույլատրելի նորմաների սահմաններում: Քաղաքի պասիվ նմուշառման 48 դիտակետերի միջոցով վերցված մթնոլորտային օդի 480 փորձանմուշներում ծծմբի երկօքսիդի և ազոտի երկօքսիդի պարունակությունները դիտվել են թույլատրելի նորմաների սահմաններում:

Գյումրի քաղաքի դիտակայանում շուրջօրյա ակտիվ նմուշառման եղանակով փոշու պարունակության որոշման համար վերցվել է օդի 25 փորձանմուշ: Փոշու միջին ամսական կոնցենտրացիան ՍԹԿ-ն գերազանցել է 2.0 անգամ: Քաղաքի պասիվ նմուշառման 24 դիտակետերից ծծմբի երկօքսիդի և ազոտի երկօքսիդի պարունակությունները որոշելու համար վերցվել է օդի 240 փորձանմուշ: Ծծմբի երկօքսիդի միջին ամսական կոնցենտրացիան ՍԹԿ-ն գերազանցել է 1.7 անգամ:

Վանաձոր քաղաքի 3 դիտակայաններում շուրջօրյա ակտիվ նմուշառման եղանակով մթնոլորտային օդի փորձանմուշներում որոշվել են ծծմբի երկօքսիդի, ազոտի երկօքսիդի և փոշու պարունակությունները: Ընդհանուր առմամբ վերցվել է օդի 279 փորձանմուշ: Որոշված նյութերից ծծմբի երկօքսիդի և ազոտի երկօքսիդի միջին ամսական կոնցենտրացիաները դիտվել են թույլատրելի նորմաների սահմաններում: Քաղաքի պասիվ նմուշառման 24 դիտակետերից ծծմբի երկօքսիդի և ազոտի երկօքսիդի պարունակությունները որոշելու համար վերցվել է օդի 240 փորձանմուշ: Ծծմբի երկօքսիդի միջին ամսական կոնցենտրացիան ՍԹԿ-ն գերազանցել է 1.6 անգամ:

Ալավերդի քաղաքի 3 դիտակայաններում շուրջօրյա ակտիվ նմուշառման եղանակով մթնոլորտային օդի փորձանմուշներում որոշվել են փոշու, ծծմբի երկօքսիդի և ազոտի երկօքսիդի պարունակությունները: Ընդհանուր առմամբ վերցվել է օդի 248 փորձանմուշ: Որոշված նյութերից փոշու միջին ամսական կոնցենտրացիան ՍԹԿ-ն գերազանցել է 4.2 անգամ: Ավտոմատ սարքի միջոցով ածխածնի մոնօքսիդի պարունակության որոշման համար կատարվել է օդի 2 921, ազոտի օքսիդների համար՝ 2 010, ծծմբի երկօքսիդի համար՝ 4 377 դիտարկում: Ըստ ավտոմատ սարքի տվյալների, ավտոմատ կայանի հարակից տարածքի մթնոլորտային օդի փորձանմուշներում որոշված նյութերից ծծմբի երկօքսիդի միջին ամսական կոնցենտրացիան ՍԹԿ-ն գերազանցել է 4.7 անգամ: Քաղաքի պասիվ նմուշառման 18 և հարակից Մադան գյուղի տարածքում տեղադրված 20 դիտակետերից ծծմբի երկօքսիդի և ազոտի երկօքսիդի պարունակու-

թյունները որոշելու համար վերցվել է օդի 380 փորձանմուշ: Ծծմբի երկօքսիդի միջին ամսական կոնցենտրացիան ՍԹԿ-ն գերազանցել է 1.7 անգամ:

Հրազդան քաղաքի դիտակայանում շուրջօրյա ակտիվ նմուշառման եղանակով մթնոլորտային օդի փորձանմուշներում որոշվել են ծծմբի երկօքսիդի, ազոտի երկօքսիդի և ցեմենտի փոշու պարունակությունները: Ընդհանուր առմամբ վերցվել է օդի 93 փորձանմուշ: Որոշված նյութերից փոշու միջին ամսական կոնցենտրացիան ՍԹԿ-ն գերազանցել է 2.3 անգամ: Քաղաքի պասիվ նմուշառման 20 դիտակետերի միջոցով վերցված մթնոլորտային օդի 200 փորձանմուշներում ծծմբի երկօքսիդի և ազոտի երկօքսիդի միջին ամսական կոնցենտրացիաները դիտվել են թույլատրելի նորմաների սահմաններում:

Արարատ քաղաքի դիտակայանում ցեմենտի փոշու պարունակության որոշման համար շուրջօրյա ակտիվ նմուշառման եղանակով վերցվել է օդի 30 փորձանմուշ: Ցեմենտի փոշու միջին ամսական կոնցենտրացիան ՍԹԿ-ն գերազանցել է 1.3 անգամ: Քաղաքի պասիվ նմուշառման 12 դիտակետերի միջոցով վերցված մթնոլորտային օդի 120 փորձանմուշներում ծծմբի երկօքսիդի և ազոտի երկօքսիդի միջին ամսական կոնցենտրացիաները դիտվել են թույլատրելի նորմաների սահմաններում:

Օաղկաձոր քաղաքի պասիվ նմուշառման 14 դիտակետերի միջոցով վերցված մթնոլորտային օդի 140 փորձանմուշներում որոշվել են ծծմբի երկօքսիդի և ազոտի երկօքսիդի պարունակությունները: Որոշված նյութերի միջին ամսական կոնցենտրացիաները դիտվել են թույլատրելի նորմաների սահմաններում: Քաղաքի մշտադիտարկման կայանում շուրջօրյա ակտիվ նմուշառման եղանակով մթնոլորտային օդի փորձանմուշներում որոշվել են փոշու, ծծմբի երկօքսիդի և ազոտի երկօքսիդի պարունակությունները: Ընդհանուր առմամբ վերցվել է օդի 93 փորձանմուշ: Որոշված նյութերից ծծմբի երկօքսիդի և ազոտի երկօքսիդի միջին ամսական կոնցենտրացիաները դիտվել են թույլատրելի նորմաների սահմաններում:

Օաղկաձոր քաղաքի տեղումներում (ձյուն) վերահսկվող որոշ նյութերի պարունակությունը, 2014թ. մարտ

մգ/դմ³

Ցուցանիշներ	Նմուշների վերցման ամսաթիվը			
	28-29	29-30	30-31	31-01.04
Ջրածնային ցուցիչ (рН)	7.60	7.36	7.91	7.65
Տեսակարար էլեկտրահաղորդականություն (μՍմ/սմ)	80.5	42.9	28.9	47.7
Սուլֆատ իոն	2.53	2.91	1.05	1.61
Քլորիդ իոն	1.01	0.47	0.31	1.87
Նիտրատ իոն	1.55	1.42	0.71	0.92
Ֆտորիդ իոն	0.004	0.004	0.003	0.002
Ամոնիում իոն	1.31	1.42	0.73	0.98

Կապան և Քաջարան քաղաքների պասիվ նմուշառման համապատասխանաբար 11 և 15 դիտակետերի միջոցով վերցվել է մթնոլորտային օդի 88 և 120 փորձանմուշ: Սյունիք գյուղի (ՀՀ Սյունիքի մարզ) պասիվ նմուշառման 9 դիտակետերի միջոցով վերցվել է մթնոլորտային օդի 54 փորձանմուշ: Նշված բնակավայրերի մթնոլորտային օդի փորձանմուշներում որոշված ծծմբի երկօքսիդի և ազոտի երկօքսիդի միջին ամսական կոնցենտրացիաները դիտվել են թույլատրելի նորմաների սահմաններում:

Ամբերդ գյուղում տեղադրված կայանում մարտ ամսին վերցվել է օդի 88 և փոշու 31 փորձանմուշ: Օդի փորձանմուշներում որոշվել են ծծմբի երկօքսիդի, ազոտի երկօքսիդի, ամոնիակի և նիտրատ իոնի, իսկ փոշու փորձանմուշներում՝ քլոր, նիտրատ, սուլֆատ, ամոնիում

իոնների և 21 քիմիական տարրերի պարունակությունները: Ազոտի երկօքսիդի և ամոնիակի միջին ամսական կոնցենտրացիաները դիտվել են թույլատրելի նորմաների սահմաններում: Ավտոմատ սարքի միջոցով գետնամերձ օզոնի պարունակության որոշման համար կատարվել է օդի 937 դիտարկում:

Ամբերդ գյուղի կայանի հարակից տարածքի տեղումներում (անձրև և ձյուն) վերահսկվող նյութերի պարունակությունը, 2014թ. մարտ

մգ/լ^թ

Ցուցանիշներ	Նմուշների վերցման ամսաթիվը						
	5-6	7-8	10-11	27-28	28	29	30
Ջրածնային ցուցիչ (pH)	7.53	7.71	7.42	7.27	7.84	7.48	7.53
Տեսակարար էլեկտրահաղորդականություն (μՍմ/սմ)	39.3	83.8	35.4	41.2	81.5	41.6	39.3
Սուլֆատ իոն	0.33	4.15	0.23	3.31	2.47	0.77	0.33
Քլորիդ իոն	0.13	2.08	1.20	0.38	0.45	1.82	0.13
Նիտրատ իոն	0.43	2.98	0.37	2.65	1.82	0.30	0.43
Ֆտորիդ իոն	0.013	0.013	0.004	0.013	0.010	0.006	0.013
Ամոնիում իոն	0.66	2.32	0.74	1.05	6.55	0.79	0.66

5.23.2. Մակերևութային ջրերի որակի մշտադիտարկում: Մարտին մակերևութային ջրերի նմուշառ կատարվել է հանրապետության 36 գետերի, Արփա-Սևան ջրատարի, Կեչուտի ջրամբարի և Երևանյան լճի 76 դիտակետերում: Վերցված 76 փորձանմուշներում որոշվել է 40-ական ցուցանիշ:

Մակերևութային ջրերի քիմիական կարգավիճակը, 2014թ. մարտ

Ջրավազանային կառավարման տարածք	Գետավազան	Ջրային օբյեկտ	Դիտակետի համարը	Դիտակետի տեղադրությունը	Քիմիական կարգավիճակի դասը	Ըստ տվյալ ցուցանիշի
Հյուսիսային ջրավազանային կառավարման տարածք	Դեբեդ գետի ավազան	Փամբակ	1	Հարթագյուղ գյուղից 0.5 կմ վերև	1	-
			2	ք.Սպիտակից 0.5 կմ ներքև	4	Նիտրատ իոն
			3	ք.Վանաձորից 0.6 կմ վերև	3	Նիտրատ իոն
			4	ք.Վանաձորից 4.5 կմ ներքև	5	Ամոնիում իոն, ֆոսֆատ իոն
		Դեբեդ	5	Մարցիգետի թափման կետից 0.5 կմ ներքև	3	Նիտրատ իոն, ֆոսֆատ իոն
			6	ք.Այրումից 0.5 կմ վերև	3	Նիտրատ իոն, ֆոսֆատ իոն
			7	ՀՀ պետական սահմանի մոտ	3	Նիտրատ իոն, ֆոսֆատ իոն
		Ձորագետ	8	ք.Ստեփանավանից 0.5 կմ վերև	2	-
			10	Գետաբերան	2	-
		Տաշիր	11	Միխայելովկա գյուղից 0.5 կմ վերև	4	ԹՔՊ, ամոնիում իոն, ֆոսֆատ իոն
			12	Սարատովկա գյուղից 0.5 կմ ներքև	3	Նիտրատ իոն, ֆոսֆատ իոն
		Մարցիգետ	13	Գետաբերան	2	-
		Ախթալա	14	Գետաբերան	5	Ցինկ, պղինձ, կադմիում, մանգան, սուլֆատ իոն
		Գարգառ	210	Կուռթան գյուղի շրջանում	1	-
			342	Ակունք	2	-
		Շնող	343	Գետաբերան	4	Ֆոսֆատ իոն
Աղստ գետի ավազան	Աղստ	15	ք.Իլիջանից 1.2 կմ վերև	2	-	
		16	ք.Դիլիջանից 0.5 կմ ներքև	3	Ամոնիում իոն	
		17	ք.Իջևանից 1 կմ վերև	2	-	
		18	ՀՀ պետական սահմանի մոտ	2	-	
Գետիկ	20	Գետաբերան	2	-		

5.ՍՈՑԻԱԼ-ԺՈՂՈՎՐԴԱԳՐԱԿԱՆ ՀԱՏՎԱԾ

Ջրավազանային կառավարման տարածք	Գետավազան	Ջրային օբյեկտ	Դիտակետի համարը	Դիտակետի տեղադրությունը	Քիմիական կարգավիճակի դասը	Ըստ տվյալ ցուցանիշի	
Ախուրյանի ջրավազանային կառավարման տարածք	Մեծամոր գետի ավազան	Մեծամոր	40	ք.Վաղարշապատից 10 կմ հարավ	5	Ֆոսֆատ իոն	
			41	ք.Վաղարշապատից 11 կմ հարավ-արևելք	4	Ամոնիում իոն, ֆոսֆատ իոն	
			42	Ռանչպար գյուղից 0.5 կմ ներքև	3	Ամոնիում իոն, նիտրիտ իոն, ֆոսֆատ իոն	
Հրազդանի ջրավազանային կառավարման տարածք	Քասախ գետի ավազան	Քասախ	43	ք.Ապարանից 0.5 կմ վերև	3	Ֆոսֆատ իոն	
			44	ք.Ապարանից 0.5 կմ ներքև	5	Ամոնիում իոն, ֆոսֆատ իոն	
			45	ք.Աշտարակից 1 կմ վերև	4	Ֆոսֆատ իոն	
			46	ք.Աշտարակից 3.5 կմ ներքև	5	Ֆոսֆատ իոն	
			47	Գետաբերան	4	Ֆոսֆատ իոն	
	Հրազդան գետի ավազան (միջին ներքին հոսանք)	Հրազդան	Հրազդան	50	Փարպի գյուղից 0.5 կմ ներքև	5	Ֆոսֆատ իոն
				52	Քաղսի գյուղից 0.5 կմ ներքև	4	Ֆոսֆատ իոն
				53	Արգել գյուղից 0.5 կմ ներքև	3	ԹՎՊ, ԹՔՊ, ֆոսֆատ իոն
				54	Արգնի ՀԷԿ-ից 0.5 կմ ներքև	3	Նիտրատ իոն
				55	ք.Երևանից 6 կմ ներքև, Դարբնիկ գյուղի մոտ	5	Ամոնիում իոն, ֆոսֆատ իոն, մանգան, վանադիում
				56	Գետաբերան	5	Ֆոսֆատ իոն, մանգան, վանադիում
				225	Գեղանիստ գյուղի մոտ	4	ԹՔՊ, ամոնիում իոն, ֆոսֆատ իոն
	Գետառ	59	Գետաբերան	5	Ամոնիում իոն, ֆոսֆատ իոն, վանադիում		
	Մարմարիկ գետի ավազան	Մարմարիկ	58	Գետաբերան	2	-	
	Ծառաղբյուր գետի ավազան	Ծառաղբյուր	311	ք.Ծաղկաձորից վերև	2	-	
312			ք.Ծաղկաձորից ներքև	5	Ամոնիում իոն, ֆոսֆատ իոն		
Սևանի ջրավազանային կառավարման տարածք	Ձկնագետ գետի ավազան	Ձկնագետ	61	Գետաբերան	3	ԹՔՊ, ֆոսֆատ իոն	
	Մասրիկ գետի ավազան	Մասրիկ	63	Գետաբերան	4	Ֆոսֆատ իոն	
	Սոթք գետի ավազան	Սոթք	65	Գետաբերան	3	ԹՔՊ, ֆոսֆատ իոն	
	Վարդենիսի լեռներից սկսվող գետեր	Վարձաղբյուր	67	Գետաբերան	3	ԹՎՊ, ֆոսֆատ իոն	
		Վարդենիս	70	Գետաբերան	3	Ամոնիում իոն, ֆոսֆատ իոն	
		Մարտունի	72	Գետաբերան	4	Ֆոսֆատ իոն	
	Գեղամա լեռներից սկսվող գետեր	Արգիճի	74	Գետաբերան	4	Ֆոսֆատ իոն	
		Շողվակ	76	Գետաբերան	2	-	
		Գավառագետ	78	Գետաբերան	4	Ամոնիում իոն, ֆոսֆատ իոն	
Արարատյան ջրավազանային կառավարման տարածք	Վեղի գետի ավազան	Վեղի	82	ք.Արարատից 2 կմ ներքև	3	ԹՔՊ, ֆոսֆատ իոն	
	Արփա գետի ավազան	Արփա	84	ք.Վայքից 0.5 կմ վերև	2	-	
			85	ք.Վայքից 0.5 կմ ներքև	2	-	
			86	ք.Եղեգնաձորից 0.5 կմ վերև	2	-	
			87	Արենի գյուղից 0.5 կմ ներքև	2	-	
			88	Շատին գյուղից 0.5 կմ ներքև	2	-	
	Արփա-Սևան ջրատար	68	Օռվինար գյուղից 0.7 կմ վերև	3	Նիտրատ իոն, ֆոսֆատ իոն		

5.ՍՈՑԻԱԼ-ԺՈՂՈՎՐԴԱԳՐԱԿԱՆ ՀԱՏՎԱԾ

Ջրավազանային կառավարման տարածք	Գետավազան	Ջրային օբյեկտ	Դիտակետի համարը	Դիտակետի տեղադրությունը	Քիմիական կարգավիճակի դասը	Ըստ տվյալ ցուցանիշի
Հարավային ջրավազանային կառավարման տարածք	Մեղրի գետի ավազան	Մեղրիգետ	89	ք.Մեղրիից 0.5 կմ վերև	2	-
			90	Գետաբերան	2	-
	Ողջի գետի ավազան	Ողջի	91	ք.Քաջարանից 1.7 կմ վերև	2	-
			92	ք.Քաջարանից 1.8 կմ ներքև	5	Ամոնիում իոն, ֆոսֆատ իոն, մանգան
			93	ք.Կապանից 0.8 կմ վերև	3	Մոլիբդեն, մանգան, վանադիում
			94	ք.Կապանից 6.8 կմ ներքև	3	Ամոնիում իոն, ֆոսֆատ իոն, սուլֆատ իոն, ցինկ
					5	Պղինձ, մանգան
	Արծվանիկ	96	Գետաբերան	5	Մոլիբդեն, մանգան, վանադիում, սուլֆատ իոն	
	Գեղի գետի ավազան	Գեղի	98	Գետաբերան	3	Մոլիբդեն, մանգան
	Որոտան գետի ավազան	Որոտան	99	Գորայք գյուղից 0.5 կմ վերև	2	-
			100	ք.Սիսիանից 1 կմ վերև	2	-
			101	ք.Սիսիանից 2 կմ ներքև	2	-
			102	Տաթև Հե՛Կ գյուղից 0.5 կմ ներքև	2	-
Սիսիան գետի ավազան	Սիսիան	104	Գետաբերան	2	-	
Գորիս գետի ավազան	Գորիսգետ	106	ք.Գորիսից 3 կմ վերև	2	-	
		107	ք.Գորիսից 1.5 կմ ներքև	5	Ամոնիում իոն, ֆոսֆատ իոն	

ՀՀ ջրամբարների և Արաքս գետի աղտոտվածության վիճակը, 2014թ. մարտ

Ջրային օբյեկտի անվանումը	Դիտակետի համարը	Դիտակետը (հաստվածքը)	ՍԹԿ-ն գերազանցող միացությունների կոնցենտրացիաները										
			ԹԿՊ ₅ , մգՕ/լ	ԹՔՊ, մգՕ/լ	ամոնիում իոն, մգN/լ	նիտրիտ իոն, մգN/լ	նիտրատ իոն, մգN/լ	քլորիդ, մգ/լ	յուրմ	յուրմ	յուրմ	յուրմ	յուրմ
Արաքս	26	Հրազդան գետի թափման կետից վերև	-	-	0.611	0.038	0.00352	0.00504	0.05937	0.01027	0.30155	0.00124	-
	27	Հրազդան գետի թափման կետից ներքև	-	-	0.999	0.069	0.00244	0.00397	0.03990	0.01448	0.10184	0.00129	134.50
	28	Արմաշ գյուղից 0.5 կմ ներքև	-	44	1.090	0.117	0.00394	0.00400	0.04187	0.01435	0.18238	-	-
	29	ք.Ագարակից 2 կմ հարավ	5.0	-	-	-	0.00174	0.00422	-	0.01334	0.10593	0.00176	185.32
	30	ք.Ագարակից 2.5 կմ հարավ-արևելք	4.8	-	-	-	0.00236	0.00497	0.01246	0.01410	0.10847	0.00188	185.32
Երևանյան լիճ	112	Ամբարտակի մոտ	4.1	-	1.890	0.084	0.00174	0.00378	0.02107	0.1718	-	-	-
Կեչուտի ջրամբար	114	Ամբարտակի մոտ	4.7	-	-	-	-	-	-	0.00474	-	-	-